

ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ
ԸՍՏ ԱՐԵՂՅԱՆԻ (ՊԱՐԶ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ)

Շ. Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Անցյալ դարի վերջերին և XX դարի սկզբներին հայ քերականական մտքի պատմության մեջ հանդես է դալիս Մ. Աբեղյանը: Լինելով հոգեբանական երիտքերականական ուղղության ֆորմալ-հոգեբանական հոսանքի հետևորդ, Աբեղյանը հայ լեզվի բնագավառում յուրահատուկ ձևով համադրեց այդ ուղղության ականավոր ներկայացուցիչներ Ֆորտունատովի, Օվսյանիկո-Կուլիկովսկու, Պելեգովսկու լեզվաբանական-քերականական կարևոր դրույթները և ստեղծեց մի տեսություն, քերականական մի ինքնատիպ, կուռ համակարգ, որտեղ քերականական Լրևույթների մեկնաբանության մեջ ուշադրությունը կենտրոնացնում է լեզվի ձևային կողմի վերլուծության վրա, այսինքն՝ լեզուն նկարագրում ըստ արտաքին ձևային կողմի, մեկնակետ դարձնում ձևը, ձևից գնում դեպի բովանդակությունը: Քերականության բնագավառում նա տարբերում է երկու կարգի ձևեր՝ բառի ձևեր և կապակցության ձևեր: Կապակցության ձևերի ուսմունքի հիման վրա էլ նա կառուցում է նախադասությունների իր ուսմունքը:

1912 թ. լույս է տեսնում Մ. Աբեղյանի «Աշխարհաբարի շարահյուսությունը», որտեղ ի մի բերելով շարահյուսության բնագավառում նախորդ քերականների ձեռք բերած նվաճումները և հենվելով այդ նվաճումների վրա, հեղինակն առաջին անգամ գիտական խորաթափանցությամբ, ամբողջական կերպով, սիստեմատիկորեն, սակայն բոլորովին նոր սկզբունքով և համակարգով շարադրում է արևելահայ գրական լեզվի շարահյուսության կառուցվածքը:

Առաջին անգամ գիտական լայն առարկան անվանելով «շարահյուսություն», Մ. Աբեղյանը նրա գլխավոր նպատակը տեսնում է նախադասության կառուցվածքի ուսումնասիրության մեջ րնդհանրապես:

Ունենալով շարահյուսություն առարկայի սահմանների լայն ըմբռնում, նրա ուսումնասիրության ոլորտի մեջ Աբեղյանը ներառում է ինչպես պարզ, այնպես էլ բարդ նախադասությունները, ուստի «Աշխարհաբարի շարահյուսությունը» նա բաժանում է երկու հատվածի՝ 1. «Բառերի շարահյուսություն» և 2. «Խոսքերի շարահյուսություն»:

«Բառերի շարահյուսություն» անվան տակ հեղինակը վերլուծում է պարզ նախադասության կառուցվածքը՝ «բառերի պաշտոնը խոսքի մեջ» և «բառերի կապակցությունը խոսքի մեջ». այսինքն՝ բառերի շարահյուսությունը, ըստ Աբեղյանի, նախադասության անդամների, նրանց պաշտոնների և կապակցության ձևերի ուսմունքն է, կապակցություններ, որոնցով կազմվում է պարզ նախադասությունը:

«Խոսքերի շարահյուսություն» ուսումնասիրության թե՛ առարկան և թե՛ մեկնակետը նախադասությունն է, նրա տեսակներն ու միմյանց հետ ունեցած շարահյուսական բաղադրան հաբաբերությունները, այդ հարաբերությունների արտահայտման ձևերը, այսինքն՝ «Խոսքերի կապակցությունը»:

Մ. Աբեղյանը «խոսք» և «նախադասություն» տերմինները գործածում է նույն իմաստով. խոսք նշանակում է նախադասություն: Իհարկե, Աբեղյանն ունի խոսքի ըմբռնումը ժամանակակից առումով, միայն թե այն չի անվանում և նախադասության (խոսքի) հետ ունեցած նրա կապը չի քննում:

Տրամաբանական դպրոցի ներկայացուցիչներից ոմանք նախադասության կառուցվածքի հարցերը քննելիս ելնում էին նախադասության և դատողության նույնացումից: Ի պատիվ Մ. Աբեղյանի պետք է ասել, որ նա ստեղծեց քերականական մի տեսություն, որտեղ նախադասության վերլուծությունը կատարեց ելակետ ունենալով ոչ թե նրա բովանդակությունը, այլ այդ բովանդակությունը դրսևորող ձևերը, նախադասության կառուցվածքը:

Նախադասությունը դիտելով որպես հոգեբանական դատողության լեզվական արտահայտություն, Մ. Աբեղյանը նրանում տարբերակում է երկու հիմնական գաղափար՝ առարկայի և հատկանիշի. խոսքի այդ բաղադրիչ մասերից մեկը ենթական է («Առարկան կամ առարկայի գա-

զափարը, որին վերաբերում է հատկանիշը», մյուսը՝ ստորոգյալը («հատկանիշը կամ հատկանիշի զաղափարը, որ վերագրվում է ենթակային»)՝:

Առարկան և հատկանիշը կամ «ենթական և ստորոգյալը» կազմում են «խոսքի նյութը», բայց խոսքի էությունը չեն, դրանք դեռ նախադասություն չեն կազմում, միտք չեն հաղորդում: Խոսելով նախադասության ձևավորման քերականական միջոցների մասին, Արեղյանը հայ քերականության պատմության մեջ առաջինը նշեց ստորոգման շարահյուսական կարգի դերն իբրև նախադասություն կազմելու, միտք արտահայտելու հիմնական միջոցի: Հոգեբանորեն մեկնաբանելով ստորոգման էությունն իբրև առարկաների ու նրանց հատկանիշների պատկերացումների միջև գոյություն ունեցող կապի քերականական արտահայտություն, Արեղյանը գրում է. «Ինքնուրույն առարկան կամ գոյակը և իր ոչ ինքնուրույն հատկանիշը կամ ստորոգելին կազմում են մեր մտածության նյութը: Գոյական ու ստորոգելին՝ սպիտակ ձյուն, վազող ձի, ծաղկած ծառ՝ մեր դիտողության համար մի անբաժանելի միություն և մի պարզ զաղափար են կազմում, որովհետև հատկանիշը՝ հատկություն, գործողություն կամ դրություն, առարկայի մեջ գտնվում են իբրև նրա բաղկացուցիչ մասը: Երբ մենք ոչ ինքնուրույն հատկանիշը՝ սպիտակ, վազող, ծաղկած՝ մտքով անջատում ենք իր ինքնուրույն առարկայից (ձյուն, ձի, ծառ) և մեր մտածողության մեջ նորից վերագրում ենք առարկային կամ ստորոգում ենք, այդ ժամանակ առաջ է գալիս խոսքը կամ նախադասությունը, ինչպես՝ ձյունը սպիտակ է, ձին վազող է կամ ձին վազում է, վաղեց, ծառը ծաղկած է կամ ծառը ծաղկեց»³:

Ստորոգման քերականական կարգը բացահայտելուց հետո պարզ է դառնում, թե ինչու բոլոր բառերի կամ բառերի կապակցությունների միջոցով չի կարելի միտք հաղորդել շրջապատին: Դրա համար անհրաժեշտ են ոչ միայն առարկա և հատկանիշ կամ նրանց զաղափարը, այլև հատկանիշի վերագրումն առարկային: Հատկանիշի այսպիսի վերագրումն առարկային, ինչպես տեսանք, Արեղյանն անվանում է ստորոգում: «Ենթական և ստորոգյալը կազմում են խոսքի նյութը, իսկ ստորոգումը այդ նյութին տալիս է խոսքի ձևը»⁴ (ընդգծումը մերն է—Ս. Շ.): Նշանակում է՝ «խոսքի էությունն է ստորոգումը: Առանց ստորոգման խոսք չկա»⁵: Ըստ Արեղյանի ստորոգման շարահյուսական կարգի արտահայտման միջոցներն են բայի եղանակային ձևերը, այդ ձևերին հատուկ քերականական կարգերը (եղանակ, դեմք, թիվ), իսկ դերբայները, զուրկ լինելով վերահիշյալ կարգերից, ստորոգում չեն արտահայտում: Նշանակում է՝ «խոսք կազմում են միայն բայերը» (իմա՝ դիմավոր ձևերը— Ս. Շ.), «առանց բայի խոսք չկա»⁶:

Այսպիսով, Արեղյանը բային տալիս է բացարձակ գերակշռություն ու նշանակություն, և որովհետև ստորոգումը բայի ձևի մեջ է երևում, այդ պատճառով էլ առանձին ուղադրություն է դարձնում բայի ձևերին և նրանց իմաստներին:

Ինչպես դերբայների, այնպես էլ եղանակային ձևերի առանձնահատկությունն այն է, որ նրանք հատկանիշ են ցույց տալիս: «Բայիմաստը ցույց է տալիս այն հատկանիշը, որ իբրև ստորոգյալ վերագրվում է ենթակային (բայի դեմքին)»⁷:

Սակայն բայերն ըստ իրենց բայիմաստի որոշակիության, նախադասություն կազմելու կարողության, տարբեր են լինում: Ըստ այդմ էլ Արեղյանը բայերը բաժանում է երեք խմբի՝

1. Բայեր («ղնաց»), որոնք խոսք են կազմում մենակ, այսինքն՝ առարկային վերագրում են բայիմաստով արտահայտված՝ որոշակի հատկանիշ:՝

2. Բայեր (ևմ, լինեմ), որոնք «որոշակի բայիմաստից զուրկ լինելով», կատարում են միայն ստորոգման դեր և, վերջապես, 3. բայեր (դառնամ, կոչվեմ, համարվեմ և այլն), որոնք «բավարար չափով» բայիմաստ չունեն, թեև ունեն դեմք և կատարում են ստորոգման դեր, ինչպես առաջին երկու խմբերը: Ընդ որում, այս երրորդ խմբի մեջ Արեղյանը մտցնում է նաև անցողական և անանցողական այնպիսի բայեր, որոնք թեև առհասարակ լիիմաստ են, սակայն տվյալ կապակցության մեջ կորցնում են իրենց բայիմաստը և հանդես են գալիս որպես վերացական բայ: Վերջին երկու խմբի բայերը նախադասություն կազմելիս ընդունում են գոյական և ածական լրացումներ, որոնք իրենց իմաստով լրացնում են բայերի «անորոշ» կամ «ոչ բավա-

1 Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 360:

2 Նույն տեղում:

3 Նույն տեղում:

4 Նույն տեղում:

5 Նույն տեղում:

6 Նույն տեղում, էջ 362:

7 Նույն տեղում, էջ 361:

րար» բայիմաստը: Այն գոյական և ածական լրացումները, որոնք պարզում են «եմ», «լինեմ» բայերի ընդհանուր անորոշ բայիմաստը, Աբեղյանի համակարգում կոչվում են «ստորոգյալ», իսկ «դառնալ», «թվալ» բայերի լրացումները՝ ստորոգելիական վերադիր. վերջինս լրացնելով բայիմաստը, նրա հետ արտահայտում է ստորոգյալի գաղափար և վերադրվում ենթակային կամ խնդրին:

Ինչպես դժվար չէ նկատել, Աբեղյանը «ստորոգյալը» և «ստորոգելիական վերադիրը» բննում է որպես իմաստալիճ լրացումներ, գոյական կամ ածական լրացումներ, իսկ ստորոգում ցույց տվող մասը նա կոչում է էական բայ կամ հանգույց: Այսպիսով, նախադասության էական մասը դառնում է հանգույցը, որն ունի դեմք, թիվ, իսկ նույնիսկ բայիմաստ արտահայտող մասը դառնում է լրացում: Ինչպես հանգույցը ստորոգյալի, այնպես էլ վերացական բայերը ստորոգելիական վերադիր հետ դիտվում են նախադասության մեկ անդամ՝ բայ-ստորոգյալ, որովհետև դրանք իրարից դժվար է լինում անջատել: Բայ-ստորոգյալ են կոչվում նաև լիիմաստ բայերը՝ արտահայտված բայի թե՛ պարզ և թե՛ բաղադրյալ ժամանակներով: Թե՛ պարզ և թե՛ բաղադրյալ բայ-ստորոգյալները ցույց են տալիս ոչ միայն ենթակային վերագրվող հատկանիշը (ստորոգյալ) և հատկանիշի վերադրելը ենթակային (ստորոգում), այլև այն առարկան, որին վերադրվում է մի հատկանիշ:

Աբեղյանի շարահյուսական համակարգն ունի մեկ այլ առանձնահատկություն ևս, այն է՝ ենթական ստորոգյալի (բայի) ներուճական լրացումն է: Աբեղյանն այսպիսի եզրակացության հանգում է այն բանի հիման վրա, որ հայերենում բայի դեմքի ու թվի զաղափարներն արտահայտում են ենթակայի գաղափար. դեմքի իմաստը ձևականորեն ևս առկա է բայի մեջ, ուստի բայի դեմքը համարժեք է ենթակային, քերականորեն համարվում է նախադասության ենթական, բայց ունի «անորոշ», «տարտամ» նշանակություն, իսկ ենթական քերականորեն լրացնում, ճշգրտում, որոշակի է դարձնում բայի ակնարկած անորոշ առարկայի իմաստը, «բայց որովհետև նույն առարկան է ցույց տալիս, ինչ որ զեմքը»⁸, այդ պատճառով էլ այդ «լրացական» բառը նույնպես կոչվում է ենթակա: «Ենթական խոսքի այն մասն է, որով րացահայտվում է բայի դեմք ցույց տված առարկան, որին վերադրվում է ստորոգյալը»⁹:

«Դենաց» բայ-ստորոգյալն ըստ Աբեղյանի ավարտուն դատողություն է, որովհետև խոսողը գնալու գործողությունը վերագրում է հրրորդ դեմքի մի առարկայի, իսկ վերջինս իբրև «անոշ կամ եղող» երևում է բայի դեմքից: Երրորդ դեմքի ակնարկած առարկան, անձն ավելի որոշակի է դառնում, երբ «գենաց» բառին ավելացնում ենք «Տիգրան» բառը (Տիգրանը գնաց): Ընդ որում, եթե ենթակա լրացումն արտահայտված է գոյականով կամ գոյականաբար գործածված որևէ բառով, ապա բայի դեմքին որոշ լրացական իմաստ տալիս է, իսկ դերանունով արտահայտված ենթական ոչինչ չի փոխում նախադասության մեջ: Օրինակ՝ եթե «եկավի» փոխարեն ասենք՝ «նա եկավ», ապա նախադասության մեջ ոչինչ չի փոխվում, ուրովհետև բայի վերջավորությունն առանց այն էլ մատնանշում է հրրորդ դեմքը: Վերոհիշյալից բխում է, որ լեզվական երևույթների ձևային վերլուծությունը Աբեղյանին հանգեցնում է այն եզրակացության, որ ենթական ստորահասվում է բային (ներունակությամբ), այսինքն՝ «լեզվական տեսակետով դեմքի լրացումն է»¹⁰ (ընդգծումը մերն է — Ս. Ե.):

Վերևում արդեն նշվեց, որ ինչպես «ստորոգյալն» ու «ստորոգելիական վերադիրը», այնպես էլ ենթական բայի լրացումներն են և լրացնում են բայի ղլխավոր իմաստները՝ դեմքն ու բայիմաստը: Աբեղյանը տարբերակում է նաև բայի երկրորդական իմաստներ լրացնող անդամները՝ խնդիրներն ու պարագաները:

Պարագաներ կարող են վերցնել բոլոր բայերը, իսկ խնդիր առնելու կարողությունը հատուկ չէ բոլոր բայերին: Ըստ խնդիր առնելու առանձնահատկությունների բայերը բաժանվում են երկու խմբի՝ ենթակայական և առարկայական: Խնդիր ընդունում են միայն առարկայական բայերը:

Մ. Աբեղյանը ճանաչում է նախադասության երկու կարգի լրացումներ. բայի արտահայտած թե՛ ղլխավոր (ենթակա, ստորոգելիական վերադիր, ստորոգյալ) և թե՛ երկրորդական (խնդիր, պարագա) իմաստներն անմիջականորեն լրացնող անդամները նա կոչում է բայի լրացումներ, իսկ բայի լրացման (ենթակա, ստորոգյալ, ստորոգելիական վերադիր, խնդիր, պարագա) լրացումները՝ խոսքի կողմնակի մասեր կամ կողմնակի լրացումներ: Կողմնակի լրացումներից իբրև նրա մի ենթատեսակ Աբեղյանն առանձնացնում է վերադիրը և այդ ընդհանուր անվան

⁸ Նույն տեղում, էջ 352:

⁹ Նույն տեղում, էջ 366:

¹⁰ Նույն տեղում, էջ 352:

տակ քննում գոյական անվան բոլոր կարգի լրացումները: Իսկ բուն կողմնակի են այն լրացյալի լրացումները, որոնց լրացյալներն արտահայտված են ածականով, մակբայով, դերբայով («Լույսը բացվելիս ճանապարհ ընկանք», «Գովեստի աժանի մարդ է», «Նա շատ զեղեցիկ է» և այլն):

Կողմնակի լրացումները, բացառյալ վերագիրը, իրենց լրացյալի նկատմամբ նույն պաշտոնն են կատարում, ինչ որ բայի լրացումները բայի նկատմամբ, այսինքն լինում են՝

- «1. կողմնակի ենթակա
2. ստորոգյալ. ստորոգելիական վերագիր
3. խնդիր
4. պարադա...»¹¹

Սրանցից յուրաքանչյուրն իր հերթին կարող է լրացումներ ունենալ՝ վերագիր, կողմնակի ենթակա, խնդիր, պարադա, ստորոգյալ, ստորոգելիական վերագիր, սակայն արդեն երկրորդ կարգի, այնուհետև երրորդ կարգի կողմնակի լրացումներ և այլն:

Վերոհիշյալ շարադրանքից երևում է, որ Աբեղյանի համակարգում «բայը միշտ գերադաս է, որովհետև նրանով է արտահայտվում ստորոգումը: Խոսքի կենտրոնը կամ միջուկը կազմում է բայը, որ բուն խոսքն է, կամ խոսքի էական մասը»¹²։ Նշանակում է, նախադասության գլխավոր անդամ Մ. Աբեղյանը համարում է բայի դիմավոր ձևը, որովհետև նա իր մեջ կրում է ստորոգում արտահայտող վերջավորությունը, իսկ նախադասության մյուս անդամները համարվում են բայի լրացումներ:

Ենթական լրացում է բայի դեմքը, ստորոգյալը, ստորոգելիական վերագիրը՝ բայիմաստը, խնդիրը՝ այն առարկայի գաղափարը, որն անհրաժեշտ է գործողության կատարելու համար և, վերջապես, պարագաները գրվում են բայի գործողության կատարման հանգամանքները ցույց տալու համար: Ստորադասվելով բային, լրացումներն իրենց հերթին գերադաս են իրենց լրացումներին՝ կողմնակի լրացումներին:

Այսպիսով, հայ քերականագիտական գրականության մեջ Մ. Աբեղյանն առաջինն էր, որ նախադասության անդամների, նրանց կապակցությունների ձևային վերլուծությամբ հանգում է բայականտրոն շարահյուսական համակարգի ըմբռնմանը:

Մ. Աբեղյանը «խոսքի մաս» և «նախադասության անդամ» տերմինները գործածում է նույն իմաստով: Ահա թե ինչու և՛ ըստ իմաստի (բայ, գոյական, ածական, մակբայ), և՛ ըստ պաշտոնի տարբերակված բառախմբերը Աբեղյանը հավասարապես անվանում է «խոսքի մասեր» կամ «նախադասության անդամներ»:

Մեծ է Աբեղյանի վաստակը նախադասության անդամների բնորոշման, տարբերակման, նրանց ավելի ու ավելի շատ տեսակների ճանաչելու ուղղությամբ: Այսպես.

1. Առարկելով այն քերականներին (Այտընյան), որոնք անանցողական (կրավորական և չեզոք) բայերի հետ դրվող ստորոգելիական վերագիրը (ենթակային վերագրվող հատկանիշ) համարում են ուղղական հոլովով խնդիր, անցողական (ներգործական) բայերի հետ (ուղիղ խնդրին վերագրվող հատկանիշ) հայցական հոլովով խնդիր, կամ այն քերականներին (Պալասանյան), որոնք երկու դեպքում էլ այդ ձևերը համարում են հայցական հոլովով դրված խնդիրներ, Աբեղյանը, ելնելով ագլուտիվ օրինաչափություններից, հայ քերականագիտության մեջ առաջին անգամ խնդիրներից վերջնականապես սահմանադատում է այդպիսի ձևերը և անվանում ստորոգելիական վերագիր: Քննադատելով ստորոգելիական վերագրի մասին նախորդների տված բացատրությունները, Աբեղյանը գտնում է, որ ստորոգելիական վերագիրը թե՛ ենթակային («Ջուրը գոլորշի դարձավ»), թե՛ կրող խնդրին («Տիգրանը ջուրը գոլորշի դարձրեց») վերագրվելիս քերականորեն հարաբերության մեջ չի մտնում նախադասության մյուս անդամների հետ, վերցվում է ոչ թե իր հոլովական, այլ բառական նշանակությամբ, բայց որպես բառի ուղիղ, անփոփոխ ձև, սկզբնաձև, դիտվում է որպես ուղղական հոլով:

2. Ի տարբերություն աշխարհաբարի նախորդ քերականների, որոնք խնդիրները քննում էին «լրացուցիչ անդամներ» (дополнения) ընդհանուր անվան տակ, առանց նրանց տարբերակման և անվանման, Աբեղյանը, ելնելով ենթակայի և բայիմաստի հարաբերության տեսանկյունից, առաջին անգամ խնդիրները բաժանում է շորս խմբի և դրանք անվանում «կրող խնդիր, ներգործող խնդիր, բնության խնդիր և պարադայական խնդիր»¹³:

¹¹ Նույն տեղում, էջ 395:

¹² Նույն տեղում, էջ 395:

¹³ Նույն տեղում, էջ 374:

Կրող խնդիրն առաջին անգամ Աբեղյանն է բաժանում իմաստաբանական երկու ենթախմբի՝
 1. խնդիր, որը «ներգործվում, ազդվում, փոփոխություն է կրում կամ մի դրության մեջ է մտնում ենթակայի գործողությունից. օրինակ՝ Երեսխան պատռեց զիւրքը: Նա նրազ վառեց...»,
 2. խնդիր, որ «իբրև արդյունք առաջ է գալիս զործողությունից. օրինակ՝ Նա փռս փորեց: Դու Գամակ գրեցիր...»¹⁴ (ընդգծումը մերն է—Ս. Շ.):

Ավանդական դասակարգման հետքերը շարունակում են մնալ այն դեպքում, երբ Աբեղյանը անուղղակի խնդիրները չի տարբերակում և դարձյալ կոչում է բնության խնդիրներ, «բնության խնդիրը ցույց է տալիս մի առարկա, որ ոչ կրող է, ոչ ներգործող: Օրինակ՝ Ես տիրք տվի Տիգրանին: Նա նամակ ստացավ հորից»¹⁵: Սակայն «հալոլների կիրառական նշանակության» բաժնում նա ըստ հոլովների առանձնացնում է բնության խնդիրների տեսակներ:

3. Աշխարհաբարի նախորդ քերականների համեմատությամբ Աբեղյանը պարագաներն ըստ նշանակության բաժանելիս նրանց ավելի շատ տեսակներ է ճանաչել, այն է՝ տեղի, ժամանակի, ձևի, չափի ու քանակի, հիմունքի, եղանակի: Ավելին. նկատելով, որ պատճառի, նպատակի, պայմանի, հիմունքի և հակառակ հիմունքի պարագաների արտահայտած իմաստային հարաբերությունների միջև ընդհանուր շատ կողմեր կան, նա դրանք միացնում է «հիմունքի պարագաներ» ընդհանուր անվան տակ: Հիմունքի ընդհանուր նշանակություն ունեցող այս պարագաները, սակայն, իմաստային ռոշակի տարբերություններ են դրսևորում, ուստի և դրանք արժեքավորվում են որպես պարագաների առանձին տեսակ: Նկատելի է հատկապես ձևի և միասնության պարագաների նշանակությունների մոտիկությունը: Այդ է պատճառը, որ դրանք ևս Աբեղյանը մի խմբի մեջ է մտցնում, առանց նրանց հետագա տարբերակման: Մինչև Աբեղյանը եղանակավորող բառերը մտցված էին ձևի պարագայի խմբի մեջ. Աբեղյանը դրանք առանձնացնում է ձևի պարագայից և արժեքավորում որպես պարագայի առանձին տեսակ:

Աբեղյանը շարահյուսական վերլուծությունները կատարելիս ուշադրություն է դարձնում ոչ միայն նախադասության անդամների արտահայտած հարաբերություններին, այլև նրանց արտահայտման միջոցներին, դրսևորման ձևերին: Այս նկատառումով էլ նա վերոհիշյալ պարագաներն ըստ իրենց արտահայտման միջոցների բաժանում է երկու ենթախմբի. առաջին՝ բուն պարագաներ և երկրորդ՝ պարագայական խնդիրներ: Առաջիններն արտահայտվում են մակբայներով, իսկ երկրորդները՝ գոյականի մի հոլովված ձևով՝ կապով կամ առանց կապի: Պարագայական խնդիրները սերտ աղերսներ ունեն մի կողմից պարագաների, մյուս կողմից՝ խնդիրների հետ: Այսինքն՝ պարագայական հարաբերություն արտահայտելիս թեև պահում են իրենց հոլովական ձևերը և հոլովին հատուկ նշանակությունները, այնուամենայնիվ, բայի հետ հարաբերության մեջ մտնելով, «կորցնում են իրենց առարկայական իմաստը, այսինքն՝ չեն մտածվում իբրև բան, ինչ, կամ առարկայական խնդիր, ինչպես են կրող, ներգործող, բնության խնդիրները, այլ առնվում են մի տեսակ իբրև մակբայ՝ մտածվելով իբրև տեղ (ուր, որտեղ), ժամանակ (երբ), ձև կամ որակ (ինչպես) և քանակ (որքան)»¹⁶:

4. Ինչպես վերևում նշվեց, վերադիր անվամբ Աբեղյանը քննում է գոյական անվան բոլոր վարդի լրացումները. որոնք բաժանում է երկու խմբի՝ մականուն և բացահայտիչ: Աբեղյանի համակարգում բացահայտիչի ըմբռնումը տարբեր է նախորդների ըմբռնումներից. Աբեղյանը որոշակիություն է մտցնում բացահայտիչի ըմբռնման մեջ: Այն գոյական վերադիրը, որը դրվում է անվան և դերանվան վրա ետևից և համաձայնում է իր բացահայտյալին, համարվում է բացահայտիչ, իսկ այն գոյական լրացումը, որը դրվում է գոյական անվան սկզբում (տառելի ձուկ, վաճառ լիճ) համարվում է մականուն՝ արտահայտված գոյականով: Այսպիսի բաժանումը պայմանավորված է բացահայտիչի և մականվան քերականական ու շարահյուսական առանձնահատկություններով:

5. Մականուն անվան տակ Մ. Աբեղյանը փաստորեն քննում է հատկացուցիչն ու տարբեր խոսքի մասերով արտահայտված որոշիչները: «Մականուն ասվում են այն ածական կամ գոյական վերադիրները, որոնք դրվում են անվան վրա առաջից»¹⁷ (ընդարձակ տարածություն, կարճով ոչխար, վաղա՛ն զորավար, իմունովին նորոգություն, երկու բաժակ ջուր): Որոշիչն ու հատկացուցիչը մի խմբում զետեղելիս հեղինակը հաշվի չի առնում նրանց իմաստային և

¹⁴ Նույն տեղում:

¹⁵ Նույն տեղում, էջ 375:

¹⁶ Նույն տեղում, էջ 382:

¹⁷ Նույն տեղում, էջ 393:

ձևաբանական տարբերությունները, այլ սոսկ շարահյուսական առանձնահատկությունները, այն է՝ այդ լրացումները նախադաս Վիրբ ունեն իրենց լրացյալի նկատմամբ և նրանց հետ չեն համաձայնում:

6. Նախադասության «կողմնակի անդամներ» տերմինը և այդ անդամների տարբերակումը պատկանում են Մ. Աբեղյանին:

Ինչպես երևում է, Մ. Աբեղյանը նախադասության անդամները խմբավորում է ըստ այն բանի, թե նրանք գոյականին (վերադիր), թե բային (խնդիր, պարագա, ենթակա, ստորոգյալ, ստորոգելիական վերադիր) են լրացնում: Դրանով իսկ նա մերժում է նախադասության անդամների ավանդական բաժանումը ենթակայի և ստորոգյալի լրացումների:

Մ. Աբեղյանը բացահայտում է աշխարհաբար գրական լեզվի նախադասության կառուցվածքը, կառուցվածքային առանձնահատկությունները և ընդհանուր օրինաչափությունները: Այդ նպատակով «Բառերի կապակցությունը խոսքի մեջ» գլխում նա սկսում է կապակցության նշանակների ու միջոցների, կապակցության ձևերի քննությունը: Նախադասության անդամների միջև գոյություն ունեցող հարաբերությունները դրսևորվում են համադասությամբ և ստորադասությամբ: Վերջինս տրամաբանորեն արտահայտվում է կախման և ներունական հարաբերությամբ, իսկ կախման՝ էքստրականորեն արտահայտվում է խնդրառությամբ կամ վարումով: Վերջինս լրացում-լրացյալի մի այնպիսի ձև է, որ «գոյականը ենթարկվում է լրացյալին, որ իր նշանակությամբ իշխում է նրան՝ խնդրելով, պահանջելով, որ իր լրացումը դրվի այս կամ այն ձևով»¹⁸: Կախման հարաբերության մեջ լրացումն ամբողջապես կախված է լրացյալից և նախադասության կառուցման գործում լրացումն ու լրացյալը բոլորովին տարբեր պաշտոններ են վարում: Ըստ այդմ էլ խնդրական կապով կապված են բայը խնդիրների, հատկացուցիչը հատկացյալի հետ: Կախման հարաբերություն ստեղծելու գործում կարևոր դեր են խաղում իբրև լրացյալ հանդես եկող բառերը՝ դերբայները, բայանունները, ածականները, ինչպես նաև այն գոյականները, որոնք իրենց խնդրի հետ կապվում են բայական գաղափար արտահայտող բառերով: Իբրև կախման հարաբերություն արտահայտելու քերականական միջոցներ ճանաչվում են հոլովական ձևերը («կախման հոլով»)՝ առանց կապի կամ կապելու:

Ի տարբերություն կախման, ներունական հարաբերությամբ կապակցվելիս լրացումի ցույց տված գաղափարը մտածվում է իբրև իր լրացյալի մեջ արդեն պարունակված և նրա հետ միանում, համաձուլվում է իբրև մի գաղափար կամ թե լրացումն ըմբռնվում է իբրև իր լրացյալի երկրորդ անդամ կրկնություն ուրիշ բառով, այնպես որ լրացումն իր լրացյալին ստորադասվելով հանդերձ՝ խոսքի մեջ մի տեսակ նրան հավասար պաշտոն է վարում, կամ թե լծորդվում, ղուգորդվում է նրան և իր հոլովական ձևով կախված չէ նրանից»¹⁹ (ընդգծումը մերն է—Մ. Շ.):

Մ. Աբեղյանը ներունակություն է տեսնում բացահայտիչի և բացահայտյալի, գոյական վերադրի ու լրացյալի, ենթակայի և ստորոգելիական վերադրի, ենթակայի ու բայի դեմքի միջև: Թեև Աբեղյանը մակրայով արտահայտված բուն պարագաների և բայի փոխհարաբերությունը հանգեցնում է ստորադասությանը, բայց և այնպես պարզ չի դառնում, թե դա ստորադասության որ տեսակի մեջ պետք է մտցնել:

Աբեղյանի շարահյուսական համակարգը հյուսված է հիմնականում բառերի ստորադասական կապով, սակայն յուրաքանչյուր ստորադասական օղակ կարող է բաղկացած լինել ինչպես մեկ, այնպես էլ մի բանի անդամներից: Վերջիններս իրարից անկախ, համադոր, համադաս անդամներ են, «մեկը մյուսին լրացում-լրացյալ չի դառնում», բայց մի ընդհանուր լրացյալի նկատմամբ միևնույն պաշտոնը կատարելով, նախադասության մեջ դրսևորում են ստորադասական հարաբերություն: Սա նշանակում է, որ բաղմակի լրացումները լինում են «համանուն» իմաստով լրացումներ (ևս տեսա Տիգրանին և Արտաշեսին): Մինչդեռ «Դիրքը աշակերտին տվի», «Մեր այս երկու գեղեցիկ ծառերը չորացան» նախադասություններում թեև մի բանի լրացումներ կան՝ «աշակերտին», «գիրքը» (առաջին նախադասություն), «մեր», «այս», «երկու», «գեղեցիկ» (երկրորդ նախադասություն), բայց Աբեղյանն իրավացիորեն դրանք բաղմակի լրացումներ չի համարում, որովհետև զրանցից յուրաքանչյուրը տարբեր պաշտոն է կատարում, տարբեր հարաբերությամբ է կապվում լրացյալի հետ: Աբեղյանի համակարգում նախադասության բոլոր անդամները կարող են բաղմակի լինել, բայց բայ-ստորոգյալից, որովհետև վերջինիս բաղմակիությունը, համաձայն Աբեղյանի սկզբունքի, իր հետ բերում է նախադասության կառուցվածքային բնույթի փոփոխություններ պարզ նախադասությունը վերածվում է բարդ նախադասության:

¹⁸ Նույն տեղում, էջ 397:

¹⁹ Նույն տեղում, էջ 397:

Համադասական կապակցություններում քերականական արտահայտության միջոցներն են համադասական շղկապները, շարահասությունը (վերջինս գործում է նաև ստորահասական կապակցություններում):

«Բառերի կապակցությունը խոսքի մեջ» գլխում ամբողջ վերլուծությունը տարված է հոլովները, կապերը, համաձայնությունը, շարահասությունը առանձին-առանձին ներկայացնելու ուղղությամբ՝ դրանք հավասարապես անվանելով կապակցության միջոցներ, եղանակներ կամ ձևեր:

Մ. Աբեղյանը վիթխարի աշխատանք է կատարում կապակցության ձևերը մանրամասնորեն, ամբողջական կերպով, գիտական խորությամբ ներկայացնելու ուղղությամբ: Այսպես.

1. Շարահյուսության բաժնում Աբեղյանը հիմնական ուղադրությունը կենտրոնացնում է հոլովների շարահյուսական հարաբերությունների բացահայտման վրա: Նա հոլովաձևերի արտահայտած հիմնական կիրառական նշանակությունները և երկրորդական հարաբերությունների բազմազան նրբերանգները քննում է մեկ բաժնում, համախմբում և ուսումնասիրում է բայի, ածականի պահանջած հոլովների խնդրային ու պարագայական կիրառությունները: Հոլովների սահմանումներն ամբողջական են, ընդհանրացնող, տվյալ հոլովի էությունը հստակորեն բացահայտող: Այդ բնորոշումներով արտահայտվում են հոլովի ոչ միայն հիմնական, այլև երկրորդական կիրառությունները, դրանով իսկ շեշտվում են այն ընդհանրություններն ու տարբերությունները, որոնցով նրանք առանձնացվում են իբրև տարբեր հոլովներ:

Հոլովների նշանակությունները թվարկելիս Աբեղյանը հանգես է եկել ոչ թե նախորդ քերականների ճանաչած պաշտոնները շարադրողի դերով, այլ ավելի է խորացրել ըմբռնումները, բացահայտել իմաստային տարբերությունները, խոսքային կոնկրետ գործածությունները, ավելին. հայտնաբերել է հոլովների նոր իմաստով կիրառություններ՝ կողմնակի ենթակա (ուղղական հոլով), ներքին խնդիր, նպատակի, չափի ու քանակի (հայցական), պատճառի, ներգործող (տրական), սահմանափակման, պատմական (բացառական), պարառական (գործիական հոլով) և այլն:

Հոլովների բնագավառում Աբեղյանի կատարած աշխատանքը հսկայական է, հոլովների կիրառական նշանակությունների ուսմունքն ամբողջական ու կատարյալ ոչ միայն նախորդ ուսումնասիրությունների համեմատությամբ, այլև իր գիտական խորության տեսակետից:

2. Ժամանակակից հայերենի ներուճական կապակցությունների բարդ կապերն ու առնչակցությունները խորապես ուսումնասիրելու բնական հետևանքը եղավ այն, որ Մ. Աբեղյանը ամենայն մանրամասնությամբ բացահայտեց համաձայնության բնագավառում գործող բազմաթիվ օրինաչափություններ, սահմանեց նոր կանոններ, առանձնացրեց բացառությունները, հաշվի առնելով այս բնագավառում նախորդ քերականների արած արժեքավոր դիտողությունները: Աբեղյանն առաջին անգամ տարբերակում է համաձայնության իրացման երկու ձև՝ 1) համաձայնություն «բառերի ձևով», իր «իրար հետ կապակցվող բառերի լրացումն ու լրացյալը դրվում են թվով, դեմքով ու հոլովով միակերպ», այսինքն՝ ստանում են միևնույն քերականական կարգերը և 2) համաձայնություն բակառությամբ, երբ բառը «խոսքի մեջ համաձայնում է մի ուրիշ բառի հետ, որին վերաբերում է քերականորեն, ոչ թե ըստ ձևի, այլ ըստ բովանդակության, իմաստի»²⁰:

Մ. Աբեղյանին նախորդող քերականները (թե՛ գրաբարի և թե՛ աշխարհաբարի) նախահասության անդամների խնդրառությունը և համաձայնությունը պարզաբանելիս անդրադառնում էին շարահասությանը, սակայն այն քննում էին մակերեսորեն, ոճական հարցերի հետ կապված:

Առաջին անգամ Մ. Աբեղյանն է արժեքավորում հայերենի շարահասության դերն ու նշանակությունը: Շարահասությունը ևս համարում է բառերի հարաբերությունների արտահայտման քերականական միջոց, ավելի լայն առումով ստորոգման հետ միասին միտք արտահայտելու, նախահասություն կազմելու կարևորագույն միջոց:

Հայերենի շարահասության բնագավառում Աբեղյանի կատարած հետազոտությունները աննախադեպ էին: Եթե շարահյուսության վերաբերյալ մյուս, մասնավորապես համաձայնության, հոլովների կիրառական նշանակության հարցերին անդրադառնալիս նա այս 1-ամ այն չափով կարող էր հենվել իր նախորդների հետևությունների վրա, ապա շարահասությունը քննելիս նա առաջինն էր, որ բացահայտում էր կենդանի լեզվի օրինաչափությունները: Մ. Աբեղ-

²⁰ Նույն տեղում, էջ 497:

յանի հետազոտությունները չէին սահմանափակվում շարադասական երևույթների ընդհանուր բնութագրումով: Ներհուն գիտականը, ձեռքի տակ ունենալով բազմահարուստ փաստական նյութ, մեկ առ մեկ քննության է առնում նախադասության գլխավոր և երկրորդական անդամների սովորական ու շրջուն շարադասության գրեթե բոլոր հնարավոր դեպքերը: Դրա շնորհիվ էլ նրա հետազոտությունները ինչպես մյուս բնագավառներում, այնպես էլ շարադասության բնագավառում մինչև այսօր էլ պահպանել են իրենց գիտական արժեքը: